

**ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴՐԱԿԱՆ
ԴԵՊՔԵՐԻ ԱՀԱՋԱՆԳՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴՐԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ,
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՊՔԵՐԻ
ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ, ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ
(COVID-19) ԴՐԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ, ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՇԵՑՄԱՆ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊՈՎ ԿԱՐՃ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20.7-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

- 1) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դրական դեպքերի վարման ալգորիթմը՝ համաձայն հավելված 1-ի,
- 2) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դրական դեպքերի ինքնամեկուսացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի,
- 3) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դրական դեպքերի ինքնամեկուսացման և անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ հիշեցման բջջային կապով կարճ տեքստային հաղորդագրություն՝ համաձայն հավելված 3-ի:

2. Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի պաշտոնակատար Արտավազդ Վանյանին՝

1) Ստեղծել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դրական դեպքերի ահազանգման կենտրոն՝ Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղում՝ անհրաժեշտ կադրային և նյութատեխնիկական հագեցվածությամբ,

2) Ապահովել՝

ա. կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դրական դեպքերի ինքնամեկուսացման վերաբերյալ հրահանգավորումը՝ համաձայն սույն հրամանի հավելված 2-ի,

բ. Կազմակերպություններում արձանագրված կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դրական դեպքերի վերաբերյալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին հաղորդումը՝ Առողջապահության նախարարի 2020 թվականի թիվ 17-Ն հրամանի կատարման պահանջների վերահսկողությունը ապահովելու համար,

գ. Կազմակերպություններում արձանագրված կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դրական դեպքերի վերաբերյալ կազմակերպությունների ղեկավարներին տեղեկացումը՝ սույն հրամանի հավելված 1-ով հաստատված ալգորիթքևմի պահանջներն ապահովելու համար:

3. «Էլեկտրոնային առողջապահական միասնական օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել.

1) ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշման 24-րդ կետի կատարումը,

2) սույն հրամանի հավելված 3-ով հաստատված հաղորդագրության տարածումը՝ համագործակցելով բջջային կապի օպերատորների միջոցով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյան՝ հրամանը տեղադրել առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշանին:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ԱԼԳՈՐԻԹՄ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴՐԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԱՐՄԱՆ

Դրական դեպքի համաճարակաբանական հետազոտություն (կոնտակտավորների հայտնաբերում, դրական դեպքի հրահանգավորում ինքնամեկուսացման վերաբերյալ, դրական դեպքի և կոնտակտավորների հրահանգավորում՝ անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ)

Կոնտակտավորների վարում՝ 14 օր ամենօրյա ջերմաչափում, ախտանշանների առկայության դեպքում իրազեկում ԱԱՊ-ին համաձայն ԱՆ 2020 թվականի հունվարի 31-ի թիվ 336-Ա հրամանի:

14 օրվա ընթացքում ախտանիշների բացակայություն

14 օրվա ընթացքում ախտանիշների առկայություն դեպքում-**ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱԱՊ-Ի ԿՈՂՄԻՑ**

Բացասական

Դրական

Մեղմ ախտանիշներ

Ծանր ախտանիշներ՝ հոսպիտալացում

Մեղմ ախտանիշներ՝ տնային ինքնամեկուսացում՝ նմուշառման օրից առնվազն 10 օր գումարած ախտանշանների վերջին օրից հաշված ևս 3 անախտանիշ օր, բուժում ԱԱՊ-ի կողմից

Ծանր ախտանիշներ՝ հոսպիտալացում

1. ՀՎԿԱԿ-ի կողմից դրական դեպքի հրահանգավորում ինքնամեկուսացման և անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ
2. ՀՀ Ոստիկանության կողմից դրական դեպքի ինքնամեկուսացման հսկողություն
3. Կազմակերպությունում աշխատող դրական դեպքի ժամանակ՝
 - ՀՎԿԱԿ-ի կողմից տվյալ կազմակերպությանը իրազեկում անվտանգության կանոնների պահպանման, միջոցառումների ուժեղացման, կոնտակտավորների հեռավար աշխատանքի հնարավորինս կազմակերպման վերաբերյալ
 - ՀՎԿԱԿ-ի կողմից ՀՀ ԱԱՏՄ-ին տեղեկացում դրական դեպք արձանագրված կազմակերպության վերաբերյալ՝ անվտանգության կանոնների նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու համար

Հրահանգավորում անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ՝ ձեռքերի հիգիենա, դիմակի կրում, սոցիալական հեռավորության պահպանում՝ առնվազն 1.5 մետր, տարածքի հաճախակի օդափոխում:

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴՐԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ

Բարև Ձեզ: Անուն Ազգանուն դուք ե՞ք: **Եթե «Այո», ապա շարունակում եք:**

Ձեզ զանգահարում է (աշխատակցի անունը) Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ներկայացուցիչը՝ կորոնավիրուսային հիվանդության վերաբերյալ որոշակի տեղեկատվություն տրամադրելու և աջակցություն ցուցաբերելու համար: Շնորհակալություն իմ զանգին պատասխանելու համար:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ մեր զանգը ձայնագրվում է:

Ինչպե՞ս եք Ձեզ զգում: Ձեզ հետ կապ հաստատվե՞լ է պոլիկլինիկայից/ամբուլատորիայից:

Եթե «Այո», ապա շարունակվում է զրույցը: Ձեզ տրվե՞լ են ցուցումներ տնային խնամքի, բուժման, ընտանիքի անդամների շրջանում հիվանդության կանխարգելման վերաբերյալ: **Եթե տրվել է «Ոչ» պատասխանը, ապա շարունակվում է զրույցը:** Մենք կարող եք աջակցել կապ հաստատել պոլիկլինիկայի/ամբուլատորիայի հետ: Խնդրում եմ Ձեզ տրամադրել կցված պոլիկլինիկայի/ամբուլատորիայի անվանումը, նաև բժշկի անուն, ազգանունը: **Տրամադրված տեղեկատվության համաձայն կապ է հաստատվում պոլիկլինիկայի/ամբուլատորիայի հետ:**

Զրույցը շարունակվում է:

Դուք աշխատում ե՞ք (*ճշտել կազմակերպության անվանումը, տնօրենի անուն և ազգանունը, կազմակերպության հեռախոսահամարը, որտեղ աշխատում է դրական դեպքը*):

Տեղեկացնում ենք, որ Ձեր կորոնավիրուսի թեստը դրական է և կորոնավիրուսային վարակի տարածումից խուսափելու նպատակով Դուք ունեք ցուցում ինքնամեկուսանալու՝ նմուշառման օրից առնվազն 10 օր գումարած ախտանշանների վերջին օրից հաշված ևս 3 անախտանիշ օր: Խնդրում են հաստատել Ձեր ինքնամեկուսացման հասցեն: **(Ինքնամեկուսացման իրավական հիմքը հարցնելու դեպքում նշել ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշման պահանջները):**

Ձեր հեռախոսը մշտապես պետք է լինի Ձեզ մոտ և հասանելի, որպեսզի տարբեր միջոցներով (*sms հաղորդագրություն, ինտերնետ, զանգեր*) պարբերաբար Ձեզ հետ կապ հաստատեն Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության ներկայացուցիչը, ոստիկանության և պոլիկլինիկայի աշխատակիցները, Ձեր առողջական վիճակի, ինքնամեկուսացված լինելու փաստի և այլնի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով:

Հիշեցնենք, որ հաղորդագրություններին չպատասխանելու և ինքնամեկուսացման կանոնները խախտելու դեպքում, կարող եք օրենքով սահմանված կարգով ենթարկվել պատասխանատվության:

Նշենք, որ ինքնամեկուսացման ընթացքում Դուք պետք է պահպանեք **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**՝:

- Դուք չպետք է հաճախեք աշխատանքի կամ ուսման վայր, հասարակական վայրեր, ջօգտվեք հասարակական տրանսպորտից/տաքսիներից, բժշկական օգնության և սպասարկման կարիք ունենալու դեպքում անհապաղ հայտնեք առողջության առաջնային պահպանման Ձեզ սպասարկող բժշկին:
- Ձեր և ընտանիքի մյուս անդամների միջև հնարավորինս ապահովել ֆիզիկական հեռավորության (առնվազն 1.5 մետր) պահպանումը՝ խուսափելով անմիջական շփումից, մի սենյակում գտնվելիս Դուք և Ձեզ խնամողները պարտադիր պետք է կրել դիմակ, ձեռքերը հաճախակի լվանալ օճառով և ջրով՝ առնվազն 20 վայրկյան տևողությամբ, և մանրակրկիտ չորացնել: Խուսափել չլվացված ձեռքերով աչքերին, քթին և բերանին դիպչելուց:

- Ձեր կողմից լվացարանից, լոգարանից օգտվելուց հետո այն մանրակրկիտ մաքրվում է՝ լվացող ու մաքրող նյութերի օգտագործմամբ: Ձեր սրբիչն (և՛ լոգանքի, և՛ ձեռքերի) առանձնացվում է տան մյուս անդամների սրբիչներից:
- Ձեզ հետ բնակվող ընտանիքի անդամների մոտ հիվանդության ախտանշանների ի հայտ գալու դեպքում՝ ջերմության բարձրացում, դժվարացած շնչառություն, համի և հոտի զգացման կորուստ, անսովոր թուլություն և հոգնածություն, հնարավորինս շտապ կապ հաստատել տեղամասային բժշկի հետ: Արտակարգ դեպքում անհրաժեշտ է զանգահարել շտապ բժշկական օգնության ծառայություն՝ անպայման տեղեկացնելով օպերատորին Ձեր ինքնամեկուսացման մեջ գտնվելու մասին:
- Անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ իրազեկեք նաև Ձեզ հետ սերտ շփված ընտանիքի անդամներին՝ հորդորելով նվազեցնել շփումները, տանից դուրս չգալ անհարկի, անցնել հեռավար աշխատանքի: Եթե անհրաժեշտ է հեռավար աշխատանքի անցնելու վերաբերյալ մեր կողմից գործատուին հրահանգավորում, խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն կազմակերպության և աշխատող կոնտակտավորների տվյալները (կոնտակտավորի անուն, ազգանուն, հայրանուն, կազմակերպության անվանում, տնօրենի անուն և ազգանուն, հեռախոսի համար):

Ձեզ մաղթում ենք առողջություն, ցտեսություն:

* **Եթե դրական դեպքը հոսպիտալացված է:** Խնդրում եմ տրամադրել Ձեր ընտանիքի որևէ մեկի հեռախոսահամար, որպեսզի մենք կարողանանք կապ հաստատել նրա հետ և զրույցը շարունակել նրա հետ, որպեսզի Ձեզ չանհանգստացնենք: Տրամադրված հեռախոսահամարով տրամադրել **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ:**

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴՐԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ, ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՇԵՑՄԱՆ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊՈՎ ԿԱՐՃ ՏԵՔՍԱՅԻՆ

Ձեր թեստը դրական է և կորոնավիրուսային վարակի տարածումից խուսափելու նպատակով Դուք պետք է ինքնամեկուսանաք 14 օր՝ պահպանելով անվտանգության կանոնները, թեստի դրական արդյունքի մուտքագրման պահից: